



Մ ՈՒՐՐ Զ ԱԿՈՐ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ԿԵՂԵՅԻ

ԽԱՉՎԵՐԱՅԷՆ ԵՏՔ ՈՒԹԵՐՈՐՈՂ ԿԻՐԱԿԻ 12 ՆՈՅԵՄԲԵՐ 2023

ԸՆԹԵՐՑՈՒՄ ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԷՆ (24.1-14)

Ահա Տէրը պիտի կործանէ եւ աւերէ ամբողջ աշխարհը, տակնուվրայ պիտի ընէ աշխարհը եւ պիտի ցրուէ անոր բնակիչները: Ա՛լ կարելի պիտի չըլլայ գանազանել ո՛րն է աշխարհականը եւ որը՝ քահանան, ո՛վ է ծառան եւ ով՛ տէրը, կամ ո՛վ է աղախինը եւ ով՛ տիկինը, ո՛վ է գնողը եւ ով՛ ծախողը, ո՛վ է փոխ տուողը եւ ով՛ փոխ առնողը, ո՛վ է պարտատէրը եւ ով՛ պարտապանը: Երկիրը ամբողջութեամբ պիտի կործանի, պիտի յափշտակուի եւ աւարուի,- ահա Տէրը ինք այս բաները կը յայտարարէ.- Երկիրը իր կործանումը կը սգայ, աշխարհը՝ իր կործանումն ու աւերը. աշխարհի ղեկավարները նոյնպէս կը սգան, որովհետեւ աշխարհը անօրէն մարդոցմով լեցուեցաւ, որոնք Տիրոջ Օրէնքը ոտնակոխ ըրին, անոր պատուիրանները փոխեցին եւ անոր հետ կնքուած յաւիտենական Ուխտը չյարգեցին: Այդ իսկ պատճառով Աստուծոյ նգովքը պիտի հարուածէ երկիրը, որովհետեւ անոր բնակիչները մեղանչեցին. մարդիկ թշուառութեան պիտի մատնուին, եւ շատ քիչ պիտի ըլլան հարուածէն ազատածները: Գինին խմող պիտի չունենայ, այգին՝ քաղող, խրախճանքը հառաչանքի պիտի փոխուի, ուրախ թմբուկները

պիտի լուեն, անբարիչ տներու սնապարծութիւնն ու հարստութիւնը վերջ պիտի գտնեն, քնարներու ձայնը պիտի դադրի: Մարդիկ ամօթով պիտի մնան, գինին պիտի չկարենայ զիրենք ուրախացնել, եւ օդին լեղի պիտի թուի խմողներուն: Ահա բոլոր քաղաքները աւերուեցան, տուններու դռները փակ մնացին, որովհետեւ ներս մտնող չկայ: Ամենուրեք գինիի փոխարէն ողբ կայ, ցնծութեան ձայները լուցին, ուրախութիւնը մարդոցմէ փախաւ: Քաղաքները ամայացան, տունները լքուած մնալէն կործանեցան: Այո՛, Տէրը այսպէս պիտի վարուի աշխարհի բոլոր ժողովուրդներուն հետ. ինչպէս մարդիկ ձիթենին կը թօթուեն, այնպէս Տէրը պիտի թօթուէ զիրենք, եւ իրենցմէ ինկածները պիտի աղաղակեն ու ողբան: Բայց երկրի վրայ մնացողները միասնաբար պիտի ուրախանան Տիրոջ փառքով:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԵՓԵՍԱՅԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ ՆԱՄԱԿԷՆ (5.15-33)

Հետեւաբար ձեր ապրելակերպին ուշադրութիւն ըրէք: Մի՛ ապրիք անմտօրէն, այլ իմաստուններու պէս: Օգտագործեցէ՛ք ժամանակը, որովհետեւ այս օրերը չար են: Ուստի անմտութիւն մի՛ ընէք. հասկցէք թէ

ի՛նչ կ'ուզէ Տէրը ձեզմէ: Գերին մի՛ դառնաք գինիին որ անառակութեան կը տանի. այլ մասնաւորաբար Սուրբ Հոգիով լեցուեցէք, իրարու հետ սաղմոսներով, օրհնութիւններով ու հոգեւոր երգերով խօսեցէք, եւ ձեր սիրտերուն մէջ միշտ երգեցէք ու սաղմոս ըսէք Տիրոջ: Տեւաբար, ամէն բանի համար շնորհակալութիւն յայտնեցէք Հօր Աստուծոյ, մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի անունով:

Քրիստոսի հանդէպ ձեր պատկառանքը արտայայտեցէք՝ իրարու հնազանդելով: Կինե՛ր, հնազանդեցէ՛ք ձեր ամուսիններուն, ինչպէս Տիրոջ պիտի հնազանդէիք. որովհետեւ ամուսին մը իր կնոջ գլուխն է, այնպէս ինչպէս Քրիստոս գլուխն է եկեղեցիին՝ իր մարմին, որուն փրկիչն է ինք: Հետեւաբար, ինչպէս եկեղեցին Քրիստոսի կը հնազանդի, այնպէս ալ կիները ամէն բանի մէջ իրենց ամուսիններուն թող հնազանդին:

Այրե՛ր, սիրեցէ՛ք ձեր կիները այնպէս՝ ինչպէս Քրիստոս սիրեց եկեղեցին եւ իր կեանքը տուաւ անոր համար, որպէսզի ջուրի լուացումով զայն մաքրէ եւ իր խօսքով սրբէ, այնպէս մը՝ որ եկեղեցին իրեն ներկայանայ ամբողջական փառքով, առանց որեւէ արատի կամ խորշոմի կամ ուրիշ թերութեան, այլ ըլլայ սուրբ եւ անարատ: Ծիշդ նոյն ձեւով ամուսիններ պարտին իրենց կիները սիրել որպէս իրենց մարմինը. որովհետեւ իր կինը սիրողը ինքզինք սիրած կ'ըլլայ, եւ չկայ մէկը որ ինքզինք ատէ. ամէն մարդ ալ կը սնուցանէ եւ կը խնամէ իր մարմինը, ինչպէս Քրիստոս կը սնուցանէ ու կը խնամէ եկեղեցին՝ իր մարմինը, որուն անդամներն ենք բոլորս, անոր մարմինէն ու ոսկորներէն:

Սուրբ Գիրքին մէջ գրուած է. «Ահա այս պատճառով այրը պիտի թողու իր հայրն ու մայրը եւ իր կնոջ միացայ, եւ երկուքը մէկ մարմին պիտի ըլլան»: Մեծ խորհուրդ մը ունի իր մէջ այս խօսքը, որ ես Քրիստոսի եւ եկեղեցիին համար ըսուած կը կարծեմ: Բայց նոյնը կը վերաբերի նաեւ ձեզմէ իւրաքանչիւրին, որովհետեւ իւրաքանչիւր այր պէտք է իր կինը սիրէ իր անձին պէս, եւ ամէն կին պէտք է յարգէ իր ամուսինը:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ (8.49-56)

Մինչ Յիսուս կը խօսէր, ժողովրդապետին տունէն մէկը եկաւ եւ իրեն ըսաւ. «Աղջիկդ մեռաւ, այլեւս մի՛ յոգնեցնեք վարդապետը»: Յիսուս ասիկա լսելով, ըսաւ ժողովրդապետին. «Մի՛ վախնար, միայն հաւատա՛ եւ աղջիկդ պիտի ապրի»:

Երբ Յիսուս ժողովրդապետին տունը հասաւ, չձգեց որ ոեւէ մէկը ներս մտնէ՝ բացի Պետրոսէն, Յակոբոսէն, Յովհաննէսէն եւ աղջկան հօրմէն ու մօրմէն: Ներս գտնուողները բոլորն ալ կու լային ու կ'ողբային: Յիսուս ըսաւ անոնց. «Մի՛ լաք. աղջիկը մեռած չէ, այլ կը քնանայ»: Անոնք գինք կը ծաղրէին, որովհետեւ գիտէին որ աղջիկը մեռած է: Յիսուս բոլորն ալ դուրս հանեց, բռնեց աղջկան ձեռքէն եւ բարձրաձայն ըսաւ. «Ո՛վ փոքրիկ, ոտքի՛ ել»: Անմիջապէս անոր հոգին վերադարձաւ եւ ոտքի կանգնեցաւ: Ապա Յիսուս հրամայեց որ ուտելիք տան աղջկան, մինչ ծնողքը ապշահար եղած էր: Յիսուս անոնց պատուիրեց որ պատահածին մասին ոեւէ մէկուն բան չըսեն: